

Ս Ս Ր Կ Ս Ի Ս Գ Ս Կ Ս ԳՆ Զ Ե Ռ Ն Ա Գ Բ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Շաբար, 10 Յունիս, Ս. Գլխադրի մաս-  
րան մեջ մասնուցուած Ս. Պատարագի ընթաց-  
քին, Գեոց. Տ. Շահե Արեւոյս. Անեմեան կի-  
սասարկուագութեան եւ ապա Աւագ Սար-  
կուագութեան ասիաներ շնորհեց Ս. Արու-  
սոյս Ալեքս եւ Մարի Մանուկեան Ընծայա-  
րանի Գ. Տարին բոլորած Տրց. Յակոբ Տե-  
միրենեանի եւ Ա. Տարին բոլորած Տրց. Խա-  
չիկ Սիւլիսեանի, Տրց. Լրաջ Քեօթեանի  
եւ Տրց. Յակոբ Տեմիրենեանի:

Ձեռնագրութեան ընթացքին երգուեցան  
առաջին սարկուագ Ս. Սեփանոսի նուիր-  
ուած տարկաններ: Ամենէն յուզիչ պանը  
այն էր, երբ ընծայեալները ձեռամբարձ կը  
դառնային ժողովուրդին՝ իբրեւ նեան՝ աշ-  
խարհէ իրենց հրաժարման:

Նորընծաները ստացան իշխանութիւն  
կատարելու վերաբերում եւ կարգալու Ս.  
Աւետարան, եւ անմիջապէս սկսան սպա-  
սարկել Ս. Խորհուրդին:

Ձեռնագրիչ Սրբազանը ապա խօսեցաւ  
հոգեւունջ քարոզ մը, վեր հանելով սրբու-  
րիւնն ու վեհութիւնը այն տապաւեղին՝ որ  
այս ձեռնագրութեամբ կը բացուէր ընծայ-  
եալներուն առջեւ: Մայրեց որ Ս. Սեփա-  
նոսի հոգիով լեցուած՝ տարուհակեց անոնք  
իրենց ուսումը Ընծայարանի բաժնէն ներս,  
արժանանալու համար քանանայութեան վսեմ  
եւ սրբազան ասիանանին:

Առաջինը Վարդավառի տօնին ընդունեց  
քանանայական ձեռնագրութիւն: Իր կենսա-  
գրութիւնը տեսնել էջ 202: Ստորեւ՝ հակիրճ  
կենսագրութիւնը միւսներուն. —

*Բարշ. Խաչիկ Սրկ. Սիւլիսեան* ծնած  
է Պիլիս՝ 1958ին: Կանուխէն ընտանեօք  
փոխադրուած են Պոլիս, ուր տարի մը յա-  
նախած է Գարակեօզեան վարժարանը: Ե-  
րուսազեմ եկած է 1969ին իբրեւ Տասուր-  
եան սան: 1973ին ընդունուած է Ժառանգ.  
Վարժարան, որուն ընթացքը 1977ին աւար-  
տելէ ետք ստացած է Ուրար կրեւու արտու-  
նութիւն եւ անցած Ընծայարանի բաժինը:

*Բարշ. Լրաջ Սրկ. Քէչիկեան* ծնած է  
Պէյրութ՝ 1958ին: Նախակրթութիւնը ստա-  
նուէ ետք ձեռնագրութիւնը Լայ Աւետարանական  
վարժարանին մէջ, 1972ին եկած է Երուսա-  
զեմ եւ ընդունուած Ժառանգ. Վարժարանի  
Բ. դասարանը: Վարժարանի ընթացքը ա-  
ւարտելէ ետք 1977ին, հետեւած է Ընծայա-  
րանի դասընթացներուն եւ ստացած Ուրար:

*Բարշ. Յակոբ Սրկ. Տէմիրենեան* ծնած  
է Սասուն՝ 1960ի տարեմասին: Ընտանեօք  
Պոլիս փոխադրուելէ ետք, կը յանախէ տեղ-  
ւոյն Ներսէսեան վարժարանը: 1971ին կու-  
գայ Երուսազեմ իբրեւ Տասուրեան սան, եւ  
յուշորդ տարի կ'ստանալոր ժառանգաւորաց  
Վարժարանին, որուն ընթացքը կը բոլորէ  
1977ին, եւ ստանալով Ուրարակրթութեան  
ասիան՝ կը տարուհակ իր ուսումը Ըն-  
ծայարանի բաժնին մէջ:

«Սիոն» այս առքիւ, յանուն Ն. Ամեն.  
Ս. Պատարագ Լոր եւ Ս. Յակոբեանց Միա-  
բանութեան, արտադրեալ շնորհաւորելով նոր  
Սարկուագները, իր մայրամհները կը միա-  
ցնէ Գեոց. Տ. Շահե Սրբազանի վերոյիշեալ  
բարեմադրութիւններուն:

